Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 15
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

2020 թվականի մայիսի 27-ին, ժամը 11^{00} –ին, մասամբ առցանց եղանակով՝ «Զում» (zoom) համակարգով, տեղի ունեցավ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) Գիտական խորհրդի նիստ:

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պրոֆեսոր Դավիթ Խիթարյանը:

Գիտական խորհրդի 34 անդամներից նիստին մասնակցում էին 27-ը, որից 24-ը նիստին ներկա էին՝

1. Դ. Խիթարյանը, 2. Գ. Սարգսյանը, 3. Ա. Նուշիկյանը, 4. Վ. Գևորգյանը, 5. Ա. Զատինյանը, 6. Լ. Ստեփանյանը, 7. Տ. Սիմոնյանը, 8. Ռ. Մարտյանը, 9. Օ. Պետրոսյանը, 10. Ա. Հակոբյանը, 11. Ա. Դանիելյանը, 12. Գ. Մուրադյանը, 13. Ս. Դանիելյանը, 14. Է. Մարտիրոսյանը, 15. Հ. Մելքոնյանը, 16. Գ. Նալբանդյանը, 17. Ն. Սելումյանը, 18. Մ. Ասատրյանը, 19. Ա. Բաղդասարյանը, 20. Ա. Ստեփանյանը, 21. Հ. Բաբայանը, 22. Ս. Հովեյանը, 23. Լ. Մկրտչյանը, 24. Ս. Առուշանյանը,

իսկ 3-ը՝ մասնակցում էին առցանց տարբերակով.

1. Խ. Հարությունյանը, 2. Ա. Հարությունյանը, 3. Ա. Ավետիսյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին՝ *1. Յու. Գրիգորյանը, 2. Ա. Բարսեղյանը, 3. Ա. Բաղայյանը, 4. Ս. Սիմոնյանը, 5. Վ. Վիրաբյանը, 6. Մ. Աղաբաբյանը, 7. Դ. Սարգսյանը.*

(Գիտական խորհրդի նիստի մասնակիցների գրանցացուցակը կցվում է):

Գիտական խորհրդի նիստին հրավիրված էր ընդունելության քննությունների պատասխանատու քարտուղար Ա.Գրիգորյանը, որը ներկայացրեց «Դիմորդ-2020» ուղեցույցը, ընդունելության քննությունների առցանց գրանցման խնդիրները և լուծման ուղիները:

Մինչ օրակարգին անցնելը՝ պարոն Խիթարյանը շնորհավորեց ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ տեղեկացնելով, որ առաջին անգամ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում ձևավորվել է Աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդ, որն իրավասու է կազմակերպել դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանություններ՝ ԺԳ.00.02 Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա

(ֆիզիկական կուլտուրա) (մանկավարժական գիտություններ) մասնագիտությամբ, հետևյալ կազմով՝

1. Նախագահ՝ մ.գ.դ. Հակոբյան Ելենա Սուրենի (ԺԳ.00.02),
2.Գիտական քարտուղար՝ մ.գ.թ. Բարբարյան Մեսրոպ Սամվելի (ԺԳ.00.02),
3. Նախագահի տեղակալ՝ մ.գ.դ. Գրիգորյան Արմեն Լևոնի (ԺԳ.00.01),
4. Մ.գ.դ. Չատինյան Աշոտ Աղվանի (ԺԳ.00.02),
5. Բժշկ.գիտ.դոկտոր Աղաջանյան Մարինա Գերասիմի (ԺԴ.00.04),
6. Մ.գ.թ. Աբրահամյան Միխայիլ Սուքիասի (ԺԳ.00.02),
7. Մ.գ.թ. Ավանեսով Էռնեստ Յուրիի (ԺԳ.00.02),
8. Մ.գ.թ. Դանիելյան Սուրեն Հակոբի (ԺԳ.00.02):

Պարոն Խիթարյանը բազմամյա աշխատանքի և ներդրած ավանդի համար շնորհակալագրեր հանձնեց ինստիտուտի հսկիչ Արծրուն Ղազարյանին և Հատուկ բաժնի ղեկավար Անժելա Կարապետյանին:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Դ. Խիթարյանն առաջարկեց հաստատել օրակարգը:

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին Գիտական խորհրդի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի նախագծի հաստատում

Զեկուցող՝ Իրավական ապահովման բաժնի պետ Օ. Պետրոսյան

2. ՀՖԿՍՊԻ-ի պարբերականի նոր անվանման՝ «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» հաստատման հարցը

Զեկուցող՝ Գիտական խորհրդի քարտուղար, պրոֆեսոր Ա. Չատինյան

3.2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի վարձատրման հարցը

Զեկուցող՝ Ուսումնագիտական վարչության ղեկավար Ռ. Մարտյան

4.2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության հեռակա ուսուցման բաժնի հանձնաժողովների կազմի հաստատում

Զեկուցողներ՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան Լ. Ստեփանյան,
ՍՄԿ ֆակուլտետի դեկան Տ.Սիմոնյան

5.ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման խնդիրների վերաբերյալ առցանց ուսանողական հարցման արդյունքների հաշվետվություն (բակալավրիատի 1-4 կուրսեր, մագիստրատուրա)

Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի պետ Գ. Մուրադյան

6. Այլ հարցեր

1. Լսեցին՝ Իրավական ապահովման բաժնի պետ Օ. Պետրոսյանին, որը ներկայացրեց «Ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» նախագիծը:
Ելույթ ունեցան՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պրոֆեսոր Դավիթ Խիթարյանը, պրոֆեսորներ՝ Ա. Չատինյանը, Գ. Սարգսյանը և ուրիշներ: Նրանք հավանության արժանացրին Ընթացակարգի նախագիծը.
(Ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի նախագիծը կցվում է):
Հարցը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:
Որոշեցին՝ հաստատել «Ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» նախագիծը:
2. Լսեցին՝ Գիտական քարտուղար, պրոֆեսոր Ա. Չատինյանին: Նա ներկայացրեց «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» պարբերականի անվանափոխման հարցը:
Ելույթ ունեցան՝ ռեկտորի ԺՊ, պրոֆեսոր Դ. Խիթարյանը, ամբիոնի վարիչները և ուրիշներ:
Նրանք հավանության տվեցին «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» պարբերականի նոր խորագրին:
Հարցը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:
Որոշեցին՝ 1. Անվանափոխել «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» պարբերականը:
2. Հաստատել ՝ «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» պարբերականի նոր խորագիրը:
3. Լսեցին՝ Ուսումնագիտական վարչության ղեկավար Ռ. Մարտյանին: Նա ներկայացրեց 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի վարձատրման վերաբերյալ առաջարկությունը:

Ելույթ ունեցան՝ ռեկտորի ԺՊ, պրոֆեսոր Դ. Խիթարյանը, Մագիստրատուրայի բաժնի պետ Ա. Ստեփանյանը և ուրիշներ.
(2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի վարձատրման վերաբերյալ առաջարկությունը կցվում է):
Հարցը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:
Որոշեցին՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2019-2020թթ. ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման կազմակերպման համար հանձնաժողովների անդամների և քարտուղարության հետ 03.06.2020-30.06.2020թ.-ը կնքել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր:
Համաձայն որի՝ հանձնաժողովի նախագահին և անդամներին վճարել հետևյալ կերպ՝

1. հանձնաժողովի նախագահներին՝ 1 ժամվա համար՝ 2.300 (երկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով,
2. հրավիրված անդամի 1 ժամը՝ 1.200 (մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով,
3. քարտուղարներին՝ 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ,
4. տեխնիկական մասն ապահովողներին՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

4.Լսեցին՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան, դոցենտ Լ. Ստեփանյանին և ՍՄԿ ֆակուլտետի դեկան, դոցենտ Տ.Սիմոնյանին: Նրանք Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեցին 2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության հեռակա ուսուցման բաժնի հանձնաժողովների կազմի նախագիծը:

Ելույթ ունեցան՝ ռեկտորի ԺՊ, պրոֆեսոր Դ. Խիթարյանը, Մարզական լրագրության և շախմատի ամբիոնի ԺՊ Ա. Բաղդասարյանը և ուրիշներ: Նրանք առաջարկեցին հաստատել հեռակա ուսուցման բաժնի հանձնաժողովների կազմի նախագիծը և լրամշակել առկա ուսուցման բաժնի հանձնաժողովների կազմը (հանձնաժողովի կազմում ընդգրկել շախմատ մարզաձևի մասնագետ Գ. Հակոբյանին).

(Հեռակա ուսուցման բաժնի հանձնաժողովների կազմի նախագիծը և առկա ուսուցման բաժնի լրամշակված հանձնաժողովների կազմը կցվում են):

Հարցը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:
Որոշեցին՝ *1.*Հաստատել 2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության հեռակա ուսուցման բաժնի հանձնաժողովների կազմը:

2.Լրամշակել առկա ուսուցման բաժնի հանձնաժողովների կազմը (հանձնաժողովի կազմում ընդգրկել շախմատ մարզաձևի մասնագետ Գ. Հակոբյանին).

5.Լսեցին՝ Որակի ապահովման բաժնի պետ Գ. Մուրադյանին: Նա հաշվետվություն ներկայացրեց ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման խնդիրների վերաբերյալ առցանց ուսանողական հարցման արդյունքների (բակալավրիատի 1-4 կուրսեր, մագիստրատուրա) վերաբերյալ:
Ելույթ ունեցավ՝ ռեկտորի ԺՊ, պրոֆեսոր Դ. Խիթարյանը: Նա հավանություն տվեց կատարված աշխատանքին:
Հարցը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:
Որոշեցին՝ ընդունել ի գիտություն՝ ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման խնդիրների վերաբերյալ առցանց ուսանողական հարցման արդյունքների հաշվետվությունը (բակալավրիատի 1-4 կուրսեր, մագիստրատուրա):

6. Այլ հարցեր

6.1.Լսեցին՝ Իրավական ապահովման պաժնի պետ Օ. Պետրոսյանին: Նա ներկայացրեց «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը և մագիստրոսական թեզի պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման կարգում լրացումները հաստատելու հարցը:
Ելույթ ունեցավ՝ ռեկտորի ԺՊ, պրոֆեսոր Դ. Խիթարյանը: Նա հավանություն տվեց բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը և մագիստրոսական թեզի պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման կարգում լրացումները հաստատելուն.
(Որոշման նախագիծը կցվում է):
Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան.

1. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը՝ համաձայն 1-ին հավելվածի:

2. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Մագիստրոսական թեզի պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման կարգում հետևյալ լրացումները՝ «4. Եզրափակիչ դրույթներ. 1. Այն ուսանողները, որոնք նախորդող տարիներին չեն մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը՝ մագիստրոսական թեզի պաշտպանությանը, կարող են դիմում գրել ընթացիկ ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորումից առնվազն 2 շաբաթ առաջ՝ ինստիտուտի ռեկտորի անունով: 2. Սույն կարգի եզրափակիչ դրույթների 1–ին կետի դրույթի պահանջները տարածվում են մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա միայն այն դեպքում, եթե շրջանավարտները չեն հանձնել ավարտական աշխատանքները կամ ավարտական աշխատանքները ենթակա են վերահանձման և, եթե չի անցել ավարտական աշխատանքի արդիականությունը»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

6.2. Լսեցին՝ Գիտական խորհրդի քարտուղար, պրոֆեսոր Ա. Չատինյանին: Նա ներկայացրեց Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Հ. Յու. Ավագյանի «Տեսական գիտելիքների նշանակությունը և ձևավորումը ֆիզիկական կուլտուրայի դասերին» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը և կից անհրաժեշտ փաստաթղթերը:

Ելույթ ունեցան՝ ռեկտորի ԺՊ, պրոֆեսոր Դ. Խիթարյանը, գրախոսներ՝ ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ.Ստեփանյանը, Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Հարությունյանը:

Դոցենտ Լ.Ստեփանյանը շեշտադրեց, որ ուսումնամեթոդական ձեռնարկը կնպաստի ապագա մասնագետների և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում աշխատողների մասնագիտական ունակությունների կատարելագործմանը: Նյութը շարադրված է գրագետ, մատչելի: Ներկա ուսումնակրթական բարեփոխումների մակարդակում հրամայական անհրաժեշտություն է ուսումնական ձեռնարկներով ապահովել ոլորտի մասնագիտական աշխատաշուկան:

Պրոֆեսոր Ա. Հարությունյանը նշեց՝ Հ. Յու. Ավագյանի ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված է ֆիզկուլտուրային տեսական գիտելիքների դերն ու նշանակությունը առողջ և ֆիզիկապես ակտիվ սերունդ դաստիարակելու գործընթացում, հանրակրթական ուսումնական հաստատություններում գործող «Ֆիզիկական կուլտուրայի» ծրագրում ներառված գործնական գիտելիքների, հմտությունների, կարողությունների արդյունավետությունը ժամանակակից ուսուցման գործընթացում, ինչը հիմնավորվում է հեղինակի կատարված գիտափորձով:

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին՝ Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Հ. Յու. Ավագյանի «Տեսական գիտելիքների նշանակությունը և ձևավորումը ֆիզիկական կուլտուրայի դասերին» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

Արձանագրությունը կազմեց Ե. Սիմոնյանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ. ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ա. ՉԱՏԻՆՅԱՆ